## Տ. ՕՇԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՅՈՒԼԳՅՈՒԼՅԱՆ



Ծնվել է 1960 թ. հունիսի 18-ին, Բեյրութում: Ավազանի անունն է Գևորգ: Նախնական կրթությունն ստացել է Վահան Թեքեյան ազգային վարժարանում:

1977 թ. սեպտեմբերին ընդունվել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դպրեվանք:

Երկու տարի ուսանելուց հետո, 1979 թ. սեպտեմբերին, ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: Մեկ տարի անց մեկնել է Բեյրութ և որոշ ընդհատումից հետո, 1982 թ. վերադարձել Ս. Էջմիածին և շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

1986 թ. փետրվարի 14-ին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրըվել է սարկավագ:

1986 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը՝ ավարտաճառ ներկայացնելով «Ստեփանոս Սյունեցու մատենագրական ժառանգության մի քանի էջեր» թեմայով:

1987 թ. փետրվարի 22-ին կուսակրոն քահանա է ձեռնադրվել, ձեռամբ Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն արքեպս. Քեշիշյանի:

Այժմ պաշտոնավարում է Կանադայի Վանկուվեր քաղաքում որպես հոգևոր հովիվ: